

Սալմաթօմրութի մէջ կան քանի մը մարդեր, որոնք մեծ գործ մը տեսնելով անմահանալու համար իրենց շանը պոչը կը կտրեն:

Քսանի չափ հարուստներ կան, որոնք ազգային բարենպաստակ գործերուն համար իրենց քսակն չեն խնայեր: Ասոնցմէ տասն եւ ութ հատը անցեալ տարի իմանալով, որ Դպրոցասիրաց Արեւելեան ընկերութիւնն իրենց պարահանդէսի տոմսակ պիտի դրկէ՝ անմիջապէս տեղ մը հաւաքուեցան եւ որոշեցին թաղը ոտք չկոխել, մինչեւ որ պարահանդէսը տրուի:

Հոս ալ ուրիշ թաղերու պէս շատ մը ընկերութիւններ կազմուած են եւ կործանուած են: *ա բ գ* - ի ընկերութիւնը հաստատուած օրն՝ թաղեցին կյուսար, որ հիմնական կերպով սկսուած սոյն ընկերութիւնն *աա բբ գգ* պիտի գար *ախչ, բծպ, գկջ, դհո* - ն, եւ *բա, բե, բի*, կարդալով՝ օր ըստ օրէ յառաջ պիտի երթար... Ընկերութիւնն այսօր իւր անունն իսկ մոռցած է: Ուրիշ քանի մը ընկերութիւններ ալ կազմուեցան, բայց անոնք *եւ օ ֆ* - են սկսած ըլլալով՝ խիստ կարճատեւ կեանք ունեցան: Հիմայ *ճ մ յ* - են ընկերութիւն մը հաստատուելու միտք ունին: Այդ ընկերութիւնները որքան որ անուն չունին այսօր՝ դրամագլուխ մը ունին, որ կազմուած է քսանը մէկ հատ երկաթուղոյ բաժնետոմսէ, վաթսունը վեց եւ երեք քառորդ արծաթ մէճիտէ, քսան բարայէ, տասն ոսկիէ, երկուք ու կէս ոտք ունեցող թիկնաթոռէ ու մէջը պարապ մէկ մելանի շիշէ: Այս դրամագլուխը կպահպանեն քանի մը անձեր ազատ եւ անկախ ո՛ր եւ է պաշտօնական եւ ոչ - պաշտօնական երաշխաւորութենէ եւ պատասխանատւութենէ, եւ թաղեցին կիպնի երթալ այդ անձերէ ստորագրութիւն առնել:

Պզտիկ մաս մը կայ այս գիւղին մէջ, որ երբեմն կշարժի, երբ... երկրաշարժ ըլլայ: Բայց մեծ մասն անշարժ ըլլալով՝ լուսաւորութիւնը կկաղայ հոն:

Իգական սեռը արականէն աւելի պարկեշտ է: Աղէկ հագուելու բնաւ հոգ չտանիր. ամեն օր ալ չհագուիր, տարին անգամ մը կհագուի, մնացած օրերը գիշերազգեստով պատուհանին առջեւ կնստի եւ *ֆէս* կհիւսէ: Ասոնց համար տօնի օր չկայ. չորս տարին անգամ մը կ'երթան եկեղեցին, որ իրենց քթին քովն է, եւ իրենց քիթն ալ մեծ չէ, որ եկեղեցոյն հեռաւորութիւնն պատճառ բռնեն: Ասոնք *լալըն* կհագնին եթէ չորս տարին անգամ մը եկեղեցի երթան: Այս թաղի կիներուն հայերէն խօսակցութիւնն ուրիշ թաղի կիներուն խօսակցութենէն կզանազանի սա կէտին մէջ, որ ուրիշ թաղի կիներն հայերէնի մէջ տաճկերէն բառեր կխառնեն, մինչդեռ